ԺԱԿԼԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ. ԱՊՐԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՎ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼ ԱՊՐԵԼՈՎ

ԱՐԱՔՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու
ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի դոցենտ

Համառոտ

Գյումրեցի գեղանկարիչ Ժակլին Սարգսյանը կին արվեստագետ է, ով նկարազարդում է եկեղեցիներ, համարժեք դրսևորում է իր տաղանդը թե՛ նկարչության, թե՛ դիզայնի ասպարեզներում: Ժակլինի կտավները պատմում են նկարչուհու կյանքի պատմությունը. նա ունի խորհրդանշական-պատկերային լեզու, որտեղ ամեն մի առարկա՝ ծառ, ճյուղ, տուն, թռչուն, աչք, ստանում են ուրույն իմաստ՝ օգնելով բացահայտել նկարչուհու ասելիքը, բյուրեղացնել միտքը: Գլխավոր արտահայտչամիջոցը դառնում է գույնը, որը վառ է, ակտիվ, հուզական:

Բանալի բառեր. *Գյումրի, գեղանկարիչ, դիզայներ, «Ռեալ արտ» նախագիծ, նկարչական դպրոց, որմնանկար, արվեստանոց:*

Գյումրեցի գեղանկարիչ Ժակլին Սարգսյանը (նկ. 1) իր ստեղծագործությամբ կոտրում է բոլոր կարծրատիպերը: Նա կին արվեստագետ է, որ նկարազարդում է եկեղեցիներ, համադրում ընտանիքի հոգատար մոր ու բազմազբաղ արվեստագետի կենցաղը, համարժեք դրսևորում իր տաղանդը թե՛ նկարչության, թե՛ դիզայնի ասպարեզներում: Ստեղծագործելը Ժակլինի համար ապրելու ձև է ու կյանքի իմաստ… Ժակլինը հյուսում է իր կյանքի հեքիաթը ու դիտողին դարձնում իր համախոհն ու դաշնակիցը:

Հնչեղ, գեղեցիկ անունով նկարչուհին ծնվել է Լենինականում: Ժակլինի կարծիքով՝ հորից՝ Արտաշես Սարգսյանից, ով ծագում էր բազմաշնորհ արվեստագետների տոհմից, իրեն փոխանցվել են նկարելու ձիրքը, սերը նորի ու անսովորի նկատմամբ (հայրը փոքրիկ մեքենաների ու հետաքրքիր գրիչների մեծ հավաքածու ուներ), իսկ մորից՝ Մարիետա Բարսեղովայից, անցել են ճաշակը, գունազգացողությունը, հնարամիտ իրեր հավաքելու նախասիրությունը: Աղջկա նկարչական ձիրքը շատ շուտ է բացահայտվել. հազիվհազ բռնելով մատիտ՝ 1 տարեկանում նկարել է մուկ ու ճուտ՝ գծի վարպետությամբ զարմացնելով հարազատներին:

Մանկության հուշերից են արվեստի հաստափոր գրքերը, որոնք աղջիկը զմայլված թերթում էր ու արտանկարում: Այդպիսով՝ Լեոնարդոն, Վան Գոգը, Գոգենը եղել են Ժակլինի առաջին «ուսուցիչները»: Նա ամբարում էր գույներ, կերպարներ, որպեսզի հետո ներկայացնի իր ստեղծագործություններում: Իսկ առջևում նկարչական դպրոցն էր, մանկավարժական ինստիտուտի դեկորատիվ-կիրառական արվեստի բաժինը, Երևանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղը:

Հետաքրքիր օրինաչափությամբ ամենուրեք տարբերվող ու ինքնատիպ Ժակլինը հանդիպում էր անհանդուրժողականության ու խանդի: Երբ 4-րդ կուրսում նա սովորական բնորդուհուն ոճավորում ու վերածում է գնչուհու, դասախոսների կողմից արժանանում է հանդիմանության: Սակայն հաջորդ օրը Ֆրանսիայի դեսպանի տիկինը, դիտելով ուսանողների գործերը, ցանկություն է հայտնում ձեռք բերել հենց Ժակլինի «Գնչուհին», որ գտնվում էր աննկատ անկյունում: Հերթական անգամ նկատողության արժանանալով՝ Ժակլինը մեկ օրում ոչնչացնում է ողջ կիսամյակի ընթացքում կատարած նկարները: Դասախոսը ստիպված էր գնահատել նախապես մերժված աշխատանքները: Այս ամենը ձևավորում էին Ժակլինի ոճը, անկրկնելի ձեռագիրը, ամրապնդում բնավորությունը:

Վառ տաղանդը, նուրբ գունազգացողությունը, անսովոր կոմպոզիցիոն մտածողությունը ընդգծում են ինքնատիպ նկարչուհուն. Ժակլինի կյանքում սկսվում է հաջողության ու ճանաչման մի շրջան: Նրա հինգ կտավներ ցուցադրվում են Երևանի Արշիլ Գորկի պատկերասրահում, իսկ 2003 թ. նա Մոսկվայից հրավեր է ստանում մասնակցելու դիզայներների «Ձև ու գույն» միջազգային ցուցահանդեսին: Այստեղ Ժակլինը դառնում է Մոսկվայի դիզայներների միության անդամ, մասնակցում մի շարք մրցույթների, որոնցից մեկում նրա պատրաստած ձկան տեսքով զարդատուփը անմիջապես գնում է ճանաչված ռուս դիզայներ Մարինա Սկուլսկայան: Նրան առաջարկում են մնալ Մոսկվայում և աշխատել իբրև դիզայներ:

Սակայն Ժակլինը երբեք չի թաքցնում, որ ինքը նախ և առաջ գեղանկարիչ է. Մոսկվայի Մանեժում անցկացված ցուցահանդեսին նա ներկայացնում է գունեղ նատյուրմորտների շարքը: Ինչպես հիշելու է տարիներ անց. «Նախնական էքսպոզիցիայում ներկայացված մյուս նկարիչների գործերը ստիպված եղան հեռացնել հարակից պատից, քանի որ իմ կտավների գունաշարը ճնշում, գերակայում

էր մյուսների նկատմամբ՝ ստվերելով նրանց աշխատանքները»: Երկու ամիս Մոսկվայում անցկացնելուց հետո Ժակլինը Պիկասոյի պատկերասրահից առաջարկ ստացավ մասնակցելու Փարիզում կայանալիք ցուցահանդեսին, բայց մոտենում էին ակադեմիայի ավարտական քննությունները, Ժակլինը վերադարձավ Գյումրի:

Առանց նախնական էսքիզի, 6 օրում Ժակլինը ստեղծում է «Սրճարան» (գուն. պտկ. 6)՝ վեց կտորից բաղկացած դիպլոմային աշխատանքը՝ 4 մետր երկարությամբ, 3.5 մետր բարձրությամբ: Համադրելով եգիպտական որմնանկարի, Վան Գոգի, Էդգար Դեգայի, Պիտեր Բրեյգելի ստեղծագործությունների առանձին տարրեր՝ նկարչուհին ստեղծում է իր սեփական ոճը, որին բնորոշ են դեկորատիվ մտածողությունը, պատկերային ինքնատիպ լեզուն: Նկարչուհին խտացնում է 3 մասից բաղկացած նկարը՝ տարբեր հարկերում տեղի ունեցող գործողությունները համադրելով մեկ տարածության մեջ: Ներքևում կարելի է տեսնել խոհարարուհիների կոլորիտային ու կոպիտ կերպարանքներ, որոնք համադրելով գունեղ հատիկեղենի, հավի, սխտորի նատյուրմորտների հետ՝ նկարչուհին ստանում է խոհանոցում տիրող անմիջական ու տիպիկ միջավայրը: Երկրորդ շարքում մատուցողներն են՝ մեքենայական քայլվածքով, լարված դիմագծերով, իրենց արած գործի կարևորության գիտակցությամբ: Վերևի հատվածում սրճարանն է՝ իր հատուկենտ այցելուներով, դատարկ սեղաններով, միայնության ու լքվածության զգացողությամբ: Նկարի ամեն մի հատված դիտվում է առանձին-առանձին ու միաժամանակ միավորվում է ամբողջական նկարի տիրույթում: Միացնողն ու շաղկապողը վառ գունային հարաբերություններն էին. մանուշակագույն ֆոնի վրա սպիտակի ու սևի համադրությունը, անգլիական կարմիրն ու նարնջագույնը. երբեմն-երբեմն երևացող կանաչն ու ոսկեգույնը նկարին հաղորդում էին հարուստ ու նրբագեղ տեսք, այն դարձնում մոնումենտալ գործ, որը իր գունային հարաբերություններով, դեկորատիվ լուծումներով հիշվող է ու տարբերվող: Դիպլոմային աշխատանքը ընդունվեց մեծ ոգևորությամբ: Երևանյան հանձնաժողովի նախագահ Արամ Իսաբեկյանը գովասանքի արժանացրեց նկարչուհուն՝ կանխորոշելով նրան մեծ ապագա արվեստում: Ժակլինը ստացավ կարմիր դիպլոմ: Նա ցանկանում էր մեկնել Փարիզ, ցուցադրվել Պիկասոյի պատկերասրահում, սակայն… ձևավորում է գեղեցիկ ընտանիք, ունենում 2 հրաշալի բալիկներ: Միառ-

ժամանակ Ժակլինը դադարում է նկարել՝ զբաղվելով ընտանեկան հոգսերով, դիզայներական աշխատանքներով:

Երբ 2012 թ. Գյումրիում հիմնվում է «Ռեալ արտ» նախագիծը, որը համախմբում է երիտասարդ տաղանդավոր արվեստագետների (հիմնադիր՝ Արաքս Մարգարյան), առաջիններից հրավեր է ստանում Ժակլինը: Ակադեմիայի լավագույն շրջանավարտները բուհն ավարտելուց հետո տարիներ շարունակ չէին ցուցադրվել. նախագիծը հնարավորություն էր ընձեռում աշխատել ու պարբերաբար նոր գործերով ներկայանալ հանրության դատին: Նախագծի շրջանակներում նկարիչներն աշխատում էին նախապես հայտարարված թեմաների շուրջ, դրանք բացահայտում իրենց բնորոշ ձեռագրով ու արտահայտչաձևերով: «Ռեալ արտի» բոլոր նախագծերում Ժակլինը ներկայացավ իբրև ձևավորված, ինքնատիպ մտածողությամբ հետաքրքիր ու վառ արվեստագետ:

Ժակլինի կտավները առանձնանում են ասոցիատիվ պատկերային լեզվով: Նա ունի խորհրդանշական-պատկերային լեզու, որտեղ ամեն մի առարկա՝ ծառ, ճյուղ, տուն, թռչուն, աչք, ստանում է ուրույն իմաստ՝ օգնելով բացահայտել նկարչուհու ասելիքը, բյուրեղացնել միտքը: Գլխավոր արտահայտչամիջոցը դառնում է գույնը: Ժակլինի գույնը վառ է՝ հակադրությունների ու նուրբ տոնային անցումներով կառուցված: Այս առումով այն նման է Մարիամ Ասլամազյանի ոճին, ով Գյումրու գեղանկարչական դպրոցի վառ ներկայացուցիչներից է: Ինչպես և Մարիամը, Ժակլինը չի ընդունում արվեստի «իգական» ու «արական» բաժանումը: Նրա պինդ քսվածքները, ծավալատարածական լուծումները, կոմպոզիցիոն դասավորությունը, սև ուրվագծերով անջատված համարձակ գունային հարաբերությունները դիտողի մեջ ստեղծում են արական արվեստի պատրանք: Պատահական չէ, որ տարիներ շարունակ չնկարելով՝ Ժակլինի զգացմունքներն ու աշխարհընկալումը նոր դրսևորումներ ստացան: Այսպես, նախագծի առաջին ցուցահանդեսին Ժակլինը ներկայացավ ոճավորված ծառերի շարքով (նկ. 2): Ծառերը, թռչնաբները նրա արվեստում ընտանիքի, սերնդի, կյանքի շարունակական խորհուրդն ունեն: Դեկորատիվ գունաշարով շարքը տարբերվող էր, ինչի շնորհիվ նկարչուհու անունը դարձավ նրա հետագա հաջողությունների գրավականն ու բանալին:

Ամուր առանցքով նկարչուհին, սակայն, նույնքան կանացի է ու քնքուշ: «Եղեռն 100 տարի. քարերը ժողովելու ժամանակը» խորագրով

ցուցահանդեսին նա ներկայացավ Աստվածամայրերով: Նուրբ գուներանգներով Տիրամայրերը լեցուն են սիրով ու գեղեցկությամբ, որոնք փոխանցում են մարդկանց՝ զարդարելով նրանց գորշ առօրյան: Սակայն այցելուների մեջ ծագում էր մեկ հարց. «Ինչո՞ւ Ժակլինի Տիրամայրերը պատկերված են մեկ աչքով»: Պատասխանը Ժակլինն ինքը չգիտեր: Նա միայն գիտեր, որ այդպես է զգում, այդպես է տեսնում: Միգուցե նկարչուհին վախենում էր նայել կյանքին երկու աչքով, վախենում էր բացահայտել իրականությունը, ինչպես ինքն էր ասում. «Եթե իմ աշխարհը չգտնեի, ես կկործանվեի»[1]:

Նախագծի հաջորդ՝ «Հոգի ու մարմին» խորագրով ցուցահանդեսի շրջանակներում ստեղծվել են Ժակլինի «Տատն» (նկ. 3) ու «Պապը», «Փերին», «Սպասում», «Գերդաստան» կտավները: Ժակլինը ապացուցում էր, որ արվեստում կարևորը ոչ թե այն է, թե ինչ ես նկարում, այլ ինչպես ես նկարում: «Տատի» ու «Պապի» կենսահաստատ զույգը լեցուն է դրական էներգիայով, մարդկային բարությամբ: Վառ, ակտիվ գունաշարը, գունային մաքուր հարաբերությունները Ժակլինի արվեստը տանում են դեպի ֆովիզմ, սակայն առաջին հայացքից թվացյալ պարզ կերպարները հիշեցնում են պրիմիտիվիստների նկարչությունը: Նկարչուհին նկարում է ոչ թե իրական մարդուն, այլ նրա կերպարը՝ բնավորության ու առանձնահատկությունների ամբողջությունը: Մեծ վարպետություն ու թափ են հարկավոր՝ ստանալու մարդու հավաքական կերպարը, սիմվոլը, ինչը մենք հանդիպում ենք հին եգիպտական որմնանկարներում, նախնադարյան անձավապատկերներում, Անրի Ռուսոյի, Փիրոսմանիի, Սարյանի վաղ շրջանի նկարներում: Աննշան թվացող մանրուքները՝ տատի պուտիկավոր գոգնոցը, պապի անսովոր գլխարկը, ձեռքերի ժեստերը, կերպարներին տալիս են բնավորություն, առանձնահատուկ խառնվածք: Իրարից անկախ ստեղծված այս նկարների մեջ հետաքրքիր կապ կա: Տատը պատկերված է աջ աչքով, պապը՝ ձախ: Նրանց աչքերը միասին կազմում են զույգ. Տատի պարանոցը թեքված է Պապի ուղղությամբ, իսկ Պապը նայում է Տատին… Նկարչուհին ասես հաստատում է այն միտքը, որ տևական համատեղ կյանքի ընթացքում մարդիկ դառնում են մեկ ամբողջություն, փոխլրացնում միմյանց: Ժակլինը ոչ միայն գտավ իր ձեռագիրը արվեստում, նրա օրինակը ոգևորեց շատերին:

1 Ե. Սողոյան, «Ժակլին Սարգսյան. Եթե չկարողանայի իմ աշխարհը կառուցել, հնարավոր է՝ փլուզվեի», Hetq.am, 28 օգոստոսի 2014, https://hetq.am/hy/article/56234. վերջին դիտում՝ 2017 թ. սեպտեմբերի 5:

«Ռեալ արտը» օգնեց Ժակլինին ինքնաբացահայտվելու, Ժակլինն օգնեց նախագծին ընդունվելու ու սիրվելու գյումրեցիների կողմից:

Ժակլինն աչքի է ընկնում նկարչական մեծ էներգիայով ու անսովոր աշխատասիրությամբ: Հարկավոր են միայն մտահղացում (այն, ինչը մենք անվանում ենք մուսա) ու ձեռքի տակ անհրաժեշտ պարագաներ: Ու ծնվում են գունեղ գործեր, շարքեր, նախագծեր: Ժակլինը երբեք չի կրկնում. միշտ նոր ուղիներ է փնտրում ու կատարելագործում ինքն իրեն: Նրա լավագույն գործերից է Գյումրուն նվիրված շարքը (գուն. պտկ. 7), որը հասուն ու կայացած նկարչուհու ստեղծագործություն է: Այս շարքում Ժակլինն ամբողջացրել է Գյումրուն վերաբերող զգացմունքները, հույզերը, խոհերը. տները, ծառերը, մարդիկ սուբլիմավորել են տարածքի ինքնատիպ ֆենոմենը: Մուգ, գորշ գույների ֆոնին վառ ակտիվ հակադրությունները ներկայացնում են Գյումրու ինքնատիպ գունաշարը: Ժակլինը կարողանում է այնպիսի մանրուքների միջոցով, ինչպիսիք են շեմին նստած կինը, գարեջրի գավաթը, չորացած ծաղիկներով ծաղկամանը, կիսաբաց դուռը, ընդգծել գլխավոր ասելիքը, ստեղծել տրամադրություն, հոգեվիճակ (նկ. 4):

Ժակլինի դիզայներական տաղանդը դրսևորվեց նախ և առաջ իր արվեստանոցի վերականգնման ժամանակ: Քաղաքի Սլաբոդկա կոչվող պատմական հատվածում գտնվող կիսախարխուլ տանը, որտեղ տասնամյակներ առաջ նկարահանվել էր «Հին օրերի երգը» հայկական լավագույն ֆիլմերից մեկը, Ժակլինը հաղորդեց նոր շունչ ու ջերմություն: Սև, սպիտակ, կարմիր գույների համադրությամբ ինտերիերը շնչում է լուսավոր ու ստեղծագործական էներգիայով: Հին առարկաները՝ սայլը, կահույքը, սպասքը, ժամացույցները, այստեղ ստանում են նոր կյանք ու բովանդակություն: Իսկ տան դրսի պատի վերևի հատվածում, ինչպես և Ժակլինի մյուս բնակարանի վերնամասում՝ թռչունները բույն են հյուսել ու տեղավորել իրենց ձագուկներին: Մեկ ուրիշը դա ավելորդություն կհամարեր ու կվերացներ բույնը: Բայց ոչ Ժակլինը: Նախախնամություն համարելով թռչունների՝ իր տանիքի տակ պատսպարվելը՝ նկարչուհին բույնը դարձնում է իր տան դեկորի մի հատվածը: Եվ սա բնութագրում է նրան. նա կոպիտ կերպով չի թելադրում իր ճաշակն ու ներկայությունը, այլ հեռացնելով ավելորդությունները, ընդգծելով արժեքավորն ու կարևորը՝ պահպանում է տեղանքի առանձնահատկությունն ու էությունը:

Նույնը տեղի ունեցավ նաև Գյումրու Մերկուրովի անվան նկարչական դպրոցի պարագայում, որի ղեկավարությունը Ժակլինին վստահվեց 2016 թ.: 100-ամյա պատմություն ունեցող կառույցի վերականգնմանն ու վերածնությանը նկարչուհին ձեռնամուխ եղավ իրեն բնորոշ եռանդով ու նվիրումով: Ստանալով կիսավեր շինությունը՝ նա ստիպված էր հոգալ ջրմուղ-կոյուղու վերանորոգումից ու ջեռուցման համակարգի անցկացումից մինչև արտաքին ու ներքին ձևավորման ու կադրերի վերապատրաստման հարցերը: Եվ դժվարությունները ոչ միայն տեխնիկական էին. երբ Ժակլինը նկարչական դպրոցի պատուհանները դարձրեց փիրուզագույն, իսկ պատերը՝ դեղին, և իբրև բոնակներ կիրառեց հնաոճ գդալները՝ շատերը տարակուսում ու կասկածում էին: Իսկ այսօր Գյումրու Մերկուրովի անվան նկարչական դպրոցը դարձել է քաղաքի ինքնատիպ մշակութային կառույցներից մեկը, իսկ նրա աշակերտների թիվը բազմապատկվել է մի քանի անգամ:

Ժակլինը նկարազարդել է 4 եկեղեցի. Հայրենյաց գյուղում, Գյումրու Գրիգոր Լուսավորչում, Շիրակավանի եկեղեցում, Սև բերդում, ընդունված կանոնների սահմաններում Ժակլինը կրոնական թեմաների մեջ ներմուծում է 21-րդ դարի մարդու զգացմունքներն ու մտածողությունը:

Նրան հանձնարարվեց նկարազարդել Հռոմի Պապի՝ Գյումրի այցելության տարեդարձին նվիրված «Աստվածամայրը մանուկ Հիսուսի հետ» խորանը (որտեղ Պապի մասնակցությամբ մատուցվել էր սուրբ պատարագը): Կենտրոնում պատկերված է Տիրամայրը, ով իր Միածին Որդուն ամուր սեղմել է կրծքին՝ ամփոփելով սիրո խորհուրդը: Մերն ասես փոխանցվում է հրեշտակներին, նրանցից էլ՝ մեզ՝ մահկանացուներիս: Ժակլինը Տիրամորը պատկերել է Գյումրու ճարտարապետության ֆոնին. նկարչուհին կարծես աղերսում է նրա օրհնությունն ու պաշտպանությունը Գյումրու, նրա ամեն մի ընտանիքի համար, որի խորհրդանիշը պտղավետ խնձորենիներն են:

Նկարչուհին իրեն բնորոշ դեկորատիվ մտածողությամբ, գունեղ երանգները համադրելով խամրած գույների հետ, խորանին հաղորդել է տոնական հնչեղություն: Նկարչության միջոցով Ժակլինը հաստատում է սիրո ու հավատի նոր մեկնության, լույսի ու փրկության ակնկալիքի թեման:

Այդպիսին է Ժակլինը՝ նորարար ու կրեատիվ: Գյումրիում արած նկարչուհու ձևավորումներից հիշատակության են արժանի սոցիալ-կրթական կենտրոնի ինտերիերը, «Դե ֆլոր» սրճարանը, «Ֆայետոնը»:

Նկարչուհին փոխում է իր շրջապատը, քաղաքը, մարդկանց. կտավների, ձևավորումների, դիզայներական իրերի միջոցով թելադրում ճաշակ, գույն ու ժակլինյան ոճ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռիդ Հ., «Արդի նկարչության համառոտ պատմություն», Երևան, «Սարգիս Խաչենց», 2002:

Մարգարյան Ա., «Իրական արվեստ» նախագիծը՝ իբրև Գյումրու նկարչական ավանդույթների շարունակություն», «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն», միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, Գյումրի, 2013:

Սողոյան Ե., «Ժակլին Սարգսյան. Եթե չկարողանայի իմ աշխարհը կառուցել, հնարավոր է՝ փլուզվեի» Hetq.am, 28 օգոստոսի 2014, https://hetq.am/hy/article/56234. վերջին դիտում, 2017 թ. սեպտեմբերի 5:

SUMMARY

Jacqueline Sargsyan: «Live by Creating, Create by Leaving»

Araxia Margaryan

PhD of Art History, Associate Professor at SAFAA /Gumri branch/

Gyumri painter Jacqueline Sargsyan is a female artist who illustrates her talents in painting and design.Jacqueline's paintings tell the story of the artist's life. She has a symbolic-visual language where every object, tree, branch, home, bird, eye gets a unique meaning, helping to reveal the artist's message, crystallizing the mind.The key phrase becomes the color that is bright, active, and emotional.

Keywords: *Gyumri, painter, designer, "Real Art " project, painting school, fresco, studio.*

АННОТАЦИЯ

Жаклин Саргсян: "Жить творя, Творить живя"

Араксия Маргарян

Зав.кафедрой искусствоведения и гуманитарных наук

Гюмрийского отделения ГАХА

Доцент, кандидат искусствоведения

Гюмрийская художница Жаклин Саркисян проявляет свои таланты как в области изобразительного искусства, так и дизайна, расписывает церкви. Полотна рассказывают историю ее жизни. Раскрытию ее образного языка помогают символы: дерево, ветка, дом, птица, глаз, в в которые художница вкладывает особый смысл, помогая донести мысли художницы, выкристализировать их. Главным средством выражения является цвет-активный, яркий, волнующий.

Ключвые слова: *Гюмри, живописец, дизайнер, проект "Реал арт", художественная школа, фреска, мастерская*

1. Ժակլին Սարգսյան. Նկարչուհու լուսանկարը

2. Ժակլին Սարգսյան. Ծառեր, 2012

3. Ժակլին Սարգսյան. Տատը, 2015

4. «Գյումրի» շարքից, 2016